ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԸԱՀ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության <<Տրանսպորտի ծրագրերի իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկը, որը գտնվում է ՀՀ, ք.Երևան, Նալբանդյան 28 հասցեում, ստորև ներկայացնում է ՏԾԻԳ-ԲԸԱՀԱՇՁԲ-2014/2 ՃՀ – 3 ծածկագրով ԲԸԱՀ ընթացակարգի արդյունքում 07.08.2014թ-ին կնքված պայմանագրում 2014թ. հոկտեմբերի 10-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառը	Կատարվել են ՀՀ Լոռու մարզի Թեղուտ համայնքի 1,8կմ երկարությամբ ներհամայնքային ճանապարհի հիմնանորոգման աշխատանքների նախագծային լուծումների ճշգրտումներ, ինչի արդյունքում աշխատանքների Ծավալաթերթ-նախահաշվի <<0.Լաբորատոր փորձարկումներ>>, <<I.Հողային աշխատանքներ>>, <<II.Ճանապարհային հագուստ>>, <<VI.Բետոնե վաքեր>>, <<VIII.Հենապատեր>>, և <<XII. Ե/բ կամուրջ >> բաժիններում կատարվել են համապատասխան փոփոխություններ:
Փոփոխության նկարագրություն	Փոփոխության արդյունքում նվազել է Պայմանագրի գինը և Պայմանագրի 5.1 կետում կատարվել է համապատասխան փոփոխություն: Պայմանագրի թիվ 1՝ «Ծավալաթերթ-նախահաշիվ», թիվ 2՝ «Օրացուցային գրաֆիկ» և թիվ 3՝ «Վճարման ժամանակացույց» Հավելվածներում կատարվել են համապատասխան փոփոխություններ:
Փոփոխության հիմնավորում:	Պայմանագրի 8.4 կետը և հեղինակային հսկողություն իրականացնող «Արցախճան» ինստիտուտ ՓԲԸ-ի 26.09.2014թ տրված թիվ Ռ.Ս-158/1 մասնագիտական եզրակացությունը: Կատարված փոփոխությունները չեն գերազանցում պայմանագրային արժեքի 15%-ը:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Տիգրան Ջանոյանին:

Հեռախոս՝ 010 /580-523/

Էլ. փոստ՝ tjanoyan@transportpiu.am

Պատվիրատու՝ «Տրանսպորտի ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ